ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՍՆ ԱՂՔԱՏԱՑ

Որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ։
ՏՈՎԲԻԹ։

Մինչ պարն յոլոր, ճոխք, երանեալքդ աշխարհի
Ջեռնու ըղձեղ ընդ ցայգն 'ի տօն ձմերայնի.
Մինչ շուրջ ըղձեօք յակն արկանէք խրախամիտ
Լուսաճաճանչ բիւրեղ, վանդակս ու հայելիս,
Վառ ճրագարանս և ջահարունս ատաղձս,
Եւ զկոչնականն ընդ կայթս հրրճուեալ 'ի ժըմիտ.
Կոչնակն ոսկի՝ մինչ ըղձամուց լուրջ ըղձայն
Ցախորժ զանգիւն փոխէ 'ի նուագս հաճութեան.
Ո՛հ, խորհիցի՞ք զի ողեապառ 'ի կենաց
Գուցէ մըթին անդր 'ի փողոցս ոք աղքատ
Դիտէ կայտռել զըստուերսդ ընդոստ լուսացայտ՝
Ոսկի սրահին ընդ լուսանցս։

Խորհի՞ք, զի անդ եղեմնահար՝ ձիւնաթաղ
Կայ հայր անգործ սովալըլուկ անսըւաղ,
Որ շըշընջէն՝ « Ո՛րչափ առ մի ոք բարիք.
Քանի՛ ծանօթք ընդ պերճ խընջոյս իւր բերկրին.
Վա՜շ մեծատանս՝ ում որդիք իւր ծիծաղին,
Այց խաղքն եևթ իմոցըս հացք որքանի՞ք »։
Ապա կըշռէ 'ի միտան ընդ ձերդ հանդիսի
Ջիւրն օթևան, ուր և ոչ կայծ մի վառի,
Զորդիս նօթի և զ'ի հնոտիս մայր նոցուն.
Եւ տարածեալ զհանին ընդ յարդն անմըռունչ՝
Զոր ձմեռն, աւա՜ղ, վաղ խսկ էարկ ցըրտաշունչ
Գերեզմանի սակս համբռւն։

Քանզի զայս կարդ Աստուած բաղդին եդ մարդկան.
Ծանրաբեռնեալ վըշտօք ոմանք գնան կարկամ,
Կոչ սակաւուց է 'ի խընջոյս աւետչեայ,
Եւ հասարակ ոչ բոլորից անդ հանգիստ.
Որ անիրաւ աստուստ օրէնք թուին և խիստ
Բամ՝ վայելեա, ասէ նոցուն, սայց՝ Մախա։

digitised by A.R.A.R.@

Տխուր է քանս և դառնութեամբ անողոք
Նուագ 'ի սիրտ հիքին զանխուլ հրաբորբոք ·
Ճօխք, երանիկք, զմրեալք 'ի նինջ գոգ հեշտիւ,
Քաւ, մի հեշտանք թէ 'ի ձեռաց ձեր հանցէ
Զընչից մըթերոց՝ յոր պղծուցեալ զակն յառէ,
Այլ զըթութիւն, ո՛հ իմն ։
Գըթութիւն վասն՝ զոր հեքք պաշտեն զետնամած,
փոխան մօրուի մայր չարաբաստ Թըշուառաց ·
Որ վերառեալ պընդէ զկոխանեան 'ի հողոյն,
Որ ինքնանուէր՝ թէ հարկ այնպէս ինչ տայէ,
Զինչ Աստուած — վկայն՝ ում հետևին, ասացէ՝
Կերայք, արբէք, այս է մարմին իմ և՛ արիւն ։
Ո՛հ, աս միայն՝ պըճնիս ըզծոպ, մեծատունք,
Զանկուածս հիւսկէն ըզմարգարիտս և զակունս,
Ըզշափիղայ, զունայն միշտ խաղս և նանիր,
Ի փրկութիւն հոգւոցդ՝ 'ի տալ հիքին հաց,
Թող 'ի ծոցոյ կանանցդ, յորդւոց 'ի բաղկաց
Ցինք կորզեսցէ բըռնալիր ։
Տօ՛ւք · քոյր է, ճոխք, ողորմութիւն աղօթից ·
Եղո՛ւկ · մինչ ծեր ոք վիմարդեայդ սեմոց կից
Ցըրտակիզեալ ունայնաձեռն ընդդըճի ·
Մինչ ձեռք կարմիր մանկերամին առ ցըրտի՝
Ըզշուայտանաց քաղէ փըշրանսդ 'ի գետնի,
Բարձրեալն 'ի ձէնջ 'ի բաց ըզդէմըն տանի ։
Տօ՛ւք · զի և Տէր, պարգևատուն ընտանեաց,
Տացէ ուստերց ձեր ոյժ և շնորհ դըստերաց ·
Զի այգիք ձեր լըցցին պըտղով քաղցրութեան,
'Դ հասկօքն հասուն ըշտեմարանքդ հակեսցին,
Կեցջիք լաւ ես, և զըւարթունք կայտառեսցին
'Դ ակամբդ յանուրջ ցայգական ։
Տօ՛ւք · հասցէ օր՝ յորում երկիր զմեզ լըքցէ ·
Զեզ զանձս յերկինս ողորմութիւնդ յարդարէ ·
Տօ՛ւք · 'ի լըսել՝ խանդաղատի սա առ մեզ ·
Զի կարօտեալն այն սարսռակէզ 'ի հողմոց,
Եւ հեքըն ողորմ՝ մօտ խրախճանացըդ ձերոց,
Ոչ նախանձու ակն յառեսցէ այլ 'ի ձեզ ։
Տօ՛ւք · սիրեսցէ զի զձեզ Աստուած մարդացեալ,
Խոնարհեսցի զի չարն ըզձեզ անուանեալ ·
Զի գերդաստանդ անդորր իցէ և սերտ յար ·
Տօ՛ւք · զի յաւուր միում, 'ի պահ ձեր վերջին՝
փոխան մեղացդ յերկինս հըզօր մուրացկին
Լիցին աղօթք ձեզ սատար ։

Թրգմ · Հ · Գ · Ն ·

Վ · Հիւկօ

digitised by A.R.A.R.@